



**ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱԼԻՊՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

10 հուլիսի 2013թ.

Նայապարանի Նանրապետության սահմանադրական դափարանի
թիվ 1 դափական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովհաննիսյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Աշոտ Չարկյանի դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՆ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
քաղաքացի Աշոտ Չարկյանը դիմել է ՆՆ սահմանադրական դափարան՝ խնդրելով «ՆՆ
քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասը եւ 299-րդ հոդվածի 1-ին մասը, ՆՆ
քրեական դափավարության օրենսգրքի 204-րդ, 390-րդ եւ 393-րդ հոդվածները ճանաչել ՆՆ
Սահմանադրությանը հակասող եւ անվավեր»:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով
«Սահմանադրական դափարանի մասին» ՆՆ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պա-
հանջներով՝ դափական կազմը գտնում է, որ վերոհիշյալ դիմումով գործի քննության
ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.

- դիմողը, վիճարկելով նշյալ դրույթների սահմանադրականությունը, չի ներկայացրել
պարշաճ իրավական հիմնավորումներ դրանց հակասահմանադրականության վերա-

բերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համարեքսպում ՆՏ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում,

- դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պարճառահեղուկանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Դատական կազմը գտնում է, որ դատաքնության արդյունքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց:

Առաջնորդվելով ՆՏ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, գտնում ենք, որ փվյալ դեպքում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Աշոտ Չարկյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

10 հուլիսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/1-19